

ՋԱՆԻ ՈՌԴԱՐԻ

**ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

(Պատմություններ հորինելու արվեստի մասին)



Հայացված տարբերակը՝ Գայանե Բեդիրյանի

Նկարները՝ Նաիրա Պողոսյանի



ԵՐԵՎԱՆ 2011

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| Ընթերցողին | 7 |
| Խաղացող բառք | 9 |
| 1. Լճակի մեջ նետված քարը..... | 11 |
| 2. «Չառ» բառը..... | 19 |
| 3. Ստեղծագործական երևակայության երկանդամությունը..... | 27 |
| 4. «Լույսը» և «կռշիկները»..... | 35 |
| 5. Ի՞նչ կլիներ, եթե..... | 39 |
| 6. Կամայական մախաժանցը..... | 45 |
| 7. Ստեղծագործական սխաղը..... | 49 |
| 8. Հին խաղերը..... | 53 |
| 9. Ջոզոտի Կարդուշին էլ կարող է օգտակար լինել..... | 58 |
| 10. Լյուսիբի ստեղծումը..... | 61 |
| 11. Հանելուկի կառուցումը..... | 64 |
| 12. Կեղծ համեմույրը..... | 67 |
| Ժողովրդական հեքիաթները որպես շինանյութ | 69 |
| 13. Հեքիաթի «աղավաղումը»..... | 72 |
| 14. Ուղղաբիտվ Կարմիր Գլխակը..... | 75 |
| 15. «Շուռ տված» հեքիաթները..... | 79 |
| 16. Իսկ հետո՞ ինչ եղավ..... | 82 |
| 17. Եթե պատվիլը հանկարծ կատու դառնա..... | 85 |
| 18. Հեքիաթների շխափում..... | 87 |
| 19. Հեքիաթի պատճենումը..... | 90 |
| 20. Պրուսի բարսերը..... | 94 |
| 21. Ֆյոանկո Պասատորեն «խաղաղարտերն է քաջում»..... | 102 |
| 22. Նախանշված հունով ընթացող հեքիաթները..... | 106 |
| 23. Բնֆանայի կերպարի վերլուծությունը..... | 109 |
| 24. Ապակե մարդուկը..... | 113 |
| 25. Բիլ-տոյարը..... | 116 |
| 26. Հեքիաթներ լսող երեխան..... | 118 |
| «Տնային ֆանտաստիկան» | 121 |
| 27. Պարզապես ուտելը և «ուտել-ուտել» խաղը..... | 122 |
| 28. Սևղանի շուրջ պատմությունները..... | 125 |
| 29. Սեփական տան մեջ ճանապարհորդությունը..... | 131 |

Ընթերցողին

Իտալացի մանկագիր Ջանի Ռոդարիի «Ստեղծագործական երեակա-
յության ընթացակարգը» գիրքը մեզ համար հայտնագործել ենք 20-րդ դարի
90-ական բժականների սկզբին, մեծագույն հաճույքով հայացրել այն և դրել
հայ դասարների ու ծնողների, ամեն հետաքրքրիղի տրամադրության տակ:

Այս գրքի հիմքում ընկած գաղափարը պարզ է և միանգամայն ընդունելի,
այն հանգում է նրան, որ երեակայությունը մի քանի աչքի ընկնող ամիստնե-
րի մեկաշնորհը չէ, որ դրանով բոլորն են օժտված: Հոգևրան Լ. Ս. Վիգոտսկին
դա շատ ափնի վաղ է ասել, բայց հարցն այն է, որ **գաղափարները շատ դան-
գաղ են իրենց համար ճանաչարի հարթում, և դրանք անխոնջ պետք է առաջ
մղել:** Չեր ձեռքի գիրքը հենց այդ նպատակն է հետապնդում:

Ռոդարիի գրքի հիմնական բովանդակությունը կազմում են երեխայի
բազմակողմանի դաստիարակության, նրա անկրկնելի անհատականության
մեկաշնորհում հարցերը: Հեղինակին առանձնապես հետաքրքրում է երկխոսու-
նքի մեջ ստեղծագործական սաղմերի զարգացումը, մասնավորապես ստեղծա-
գործական երևակայության «արտերևույթը» (ֆենոմենը): Մի շարք վրլիսներ
հեքիաթի կառուցվածքի ու դրա ստեղծման տարբեր եղանակների վերլուծու-
թյանն են նվիրված:

**Գրքում երեխաների համար պատմություններ հորինելու որոշ եղանակ-
ների, ուղիների մասին է խոսվում և այն մասին, թե ինչպես երեխաներին օգ-
նել ինքնուրույն հորինելու:** Սակայն միայն Աստուրն և, հայտնի, թե էլի որքա և
եղանակներ կարելի է գտնել: Ըստ որում այստեղ միայն բառի միջոցով հնու-
րանության մասին է խոսվում և սոսկ հպտցիկ այն մասին, որ նույն տեխ-
նիկան առանց դժվարության մանկական ստեղծագործության սրկ է այլ բնու-
գավառում էլ կարելի է օգտագործել: Քանզի թե՛ մեկ աշակերտը, թե՛ անբող
դասարանը կարող են պատմություն հորինել, այն ընձարել կամ տիկնիկային
ներկայացման իմը դարձնել, որպես կոմիքս կամ կինոնկար զարգացնել,
ձայնագրել, տեսագրել և ընկերներին ուղարկել: Կարճ ասած՝ այս գործի
տեխնիկան մանկական ցանկացած խաղի հիմքում կարող է դրվել: Թեև դրա
մասին շատ քիչ է ասված:

Երեխայի երևակայությունը խթանելու իր մեթոդները մշակելիս Ռոդա-
րին գլխավորապես հոգեբանների, մանկավարժների, լեզվաբանների աշխա-
տանքների վրա է հիմնվել: Աշխարհի բազմաթիվ լեզուներով բարզանաված լի-
նելու շնորհիվ գրքում բերված տողարկական հնարներն ու գաղափարները
լայնորեն օգտագործվում են մանկավարժների, մեթոդիստների, մաթեմատի-
կոսների, հոգեբանների և հոգեվերլուծողների, ամենատարբեր մասնագետնե-
րի կողմից: Իտալիայից մինչև Հայաստան: Այդ կիրառությունը շնեղացնելու
համար մենք Ռոդարիի քննադիր հիմքում ենք դրել, հիմնականում պատկա-
նել: Ռոդարիի գաղափարներն ու հնարները կիրառելը հեշտացնելու նպատա-
կով

- բոլոր հնարների կիրառությանը մեր հայեցի օրինակներն ենք ստեղ-
ծել,

Խաղացող Բառը



